


ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՐՈՒՍՏՆԵՐ

ՍԵԳՐԱԿ ԳԱՐԵԳԻՆԻ ՄՈՎՍԻՍՅԱՆ

Ստեղծագործական ուժերի ծաղկման շրջանում, անժամանակ կյանքից հեռացավ հանրապետության առաջատար բիոքիմիկոս ՀՍՍՀ ԳԱ բիոքիմիայի ինստիտուտի գիտության գծով գիրեկտորի տեղակալ, ամինաթթուների և նուկլեոտիդների լաբորատորիայի վարիչ, ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ, կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սեղրակ Գարեգինի Մովսիսյանը:



Ս. Մովսիսյանը ծնվել է 1932 թ. Սիսիանում. 1954 թ. ավարտելով Երևանի բժշկական ինստիտուտի բուժական ֆակուլտետը, նա աշխատանքի է անցնում Ապարանում՝ որպես շրջանային առողջապահության բաժնի վարիչ և բժիշկ: 1958 թ. ընդունվում է ՀՍՍՀ ԳԱ բիոքիմիայի ինստիտուտի ասպիրանտուրան, սրբ հաջողությամբ ավարտում է 1961 թ.: Ինչպես ուսանողական, այնպես էլ ասպիրանտուրայում սովորելու տարիներին Ս. Մովսիսյանը մեծ հետաքրքրություն է ցուցաբերում դեպի բիոքիմիան և հաջողությամբ լուծում իր առջև դրված գիտական խնդիրները: Մասնագիտական գրականության քաջատեղյակ լինելը, գիտական համառությունը, աշխատասիրությունը և քացառիկ ընդունակությունները հնարավորություն են տալիս նրան համեմատաբար կարճատև ժամկետում սյաշտպանել թեկնածուական դիսերտացիա: Այնուհետև, նա նը-

սլատակասլաց աշխատանք է ծավալում կաթնասունների հյուսվածքներում ամինաթթուներից ամոնիակի առաջացման, գլյուկոզայի աէրոբ և անաէրոբ քայքայման և օքսիդացիոն ֆոսֆորիլացման մի շարք նուրբ մեխանիզմների բացահայտման ուղղությամբ: Այդ հետազոտությունների շնորհիվ Ս. Մովսիսյանի և այլ աշխատակիցների կողմից բացահայտվեցին կարևոր ֆերմենտային ռեակցիաներ, որոնք, անկասկած, ընդլայնում են մեր պատկերացումները բիոքիմիական գիտության մի շարք հիմնարար բաժինների վերաբերյալ:

Պրոֆեսոր Ս. Մովսիսյանը, ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Հ. Բունիաթյանի հետ միասին, հանդիսանում է ամինաթթուներից ամոնիակի առաջացման մեխանիզմի վերաբերյալ հիպոթեզի հեղինակ: Օքսիդացիոն ֆոսֆորիլացման պրոցեսում ՆԱԴ-ի դեղամինացված ձևի՝ դեղամինո-ՆԱԴ-ի մասնակցության վերաբերյալ Ս. Մովսիսյանի ստացած արդյունքները նոր հեռանկարներ են բացում կենդանի օրգանիզմում էներգիայի առաջացման, դրա չտրացման մեխանիզմների պարզաբանման գործում: Բերված աշխատանքների մի մասը ամփոփված է դոկտորական դիսերտացիայում, որը նա պաշտպանել է 1968 թ.: Լաբորատորիայում նրա մշակած պրոբլեմը ոչ միայն տեսական, այլև կարևոր պրոբնական նշանակություն ունի: Պարզվել է, որ հայտնաբերված նոր կոֆերմենտը՝ դեղամինո-ՆԱԴ-ը, մակրոէրգերի դեներացիայի ճանապարհով, խիստ բարձրացնում է սրտամկանի ֆունկցիան: Վերջին տարիներին լաբորատորիայում արդյունավետ նախապատրաստական աշխատանքներ էին տարվում դեղամինո-ՆԱԴ-ը բժշկության պրակտիկայում ներդնելու ուղղությամբ:

Ս. Մովսիսյանը համակողմանի զարգացած, հետաքրքրությունների լայն շրջանակ ունեցող գիտնական էր, նրա գրչին են պատկանում 70-ից ավելի գիտական աշխատություններ: Նա ակտիվ մասնակցություն է ունեցել բիոքիմիկոսների համամիութենական և միջազգային համագումարներին (Մոսկվա, 1961, Տոկիո, 1967, Նյու Օրլեան, 1974), կոնֆերանսներին և խորհրդակցություններին: 1973 թ. Ս. Մովսիսյանը երկարատև ժամկետով գործուղվել էր Նյու Յորքի (ԱՄՆ) Կորնելյան համալսարան, որտեղ ամերիկացի կոլեգաների հետ համատեղ զբաղվել է զլուտամատոգենիդրոգենազային ռեակցիայում դեղամինո-ՆԱԴ-ի ազդեցության մեխանիզմի ուսումնասիրությամբ:

Ս. Մովսիսյանը մեծ ուշադրություն էր դարձնում ինստիտուտի աշխատակիցների գիտական աճին, դրանով իսկ կարևոր ավանդ ներդնելով կադրերի պատրաստման գործում: Նրա ղեկավարությամբ պաշտպանվել են 8 թեկնածուական և 2 դոկտորական դիսերտացիաներ:

1977 թ. նա ընտրվում է ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ: Ս. Մովսիսյանը միաժամանակ նեյրոքիմիկոսների միջազգային ընկերության, ինչպես նաև Հայաստանի բիոքիմիկոսների ընկերության նախագահության անդամ էր:

Ս. Մովսիսյանը «Հայաստանի կենսաբանական հանդես»-ի իմբրազրական կոլեգիայի անդամ էր և ակտիվորեն մասնակցում էր այդ աշխատանքներին:

Ս. Մովսիսյանը 1954 թ. ՍՄԿԿ անդամ էր, մասնակցում էր ինչպես հանրապետության, այնպես էլ ինստիտուտի հասարակական կյանքին:

Նա ազնիվ և սկզբունքային ընկեր էր, վայելում էր ամբողջ կոլեկտիվի, հանրապետության բիոքիմիկոսների սերն ու համակրանքը:

Ս. Գ. Մովսիսյանի՝ հիանալի գիտնականի, լավ ու զգայուն ընկերոջ կերպարն ընդմիշտ կմնա մեր սրտերում:

Ա. ԳԱՌՅԱՆ, Ա. ՍԻՄՈՆՅԱՆ